գիւղը. ամբողջ օր սոված պտտելից զկնի իջանք յիշեալ գիւղը և ինձ տարան ամենահարուստ գիւղացու տուն-հիւր, առաջնորդիցս խնդրեցի, որ մի քանի ձու գտնի ճաշելու համար, մի քառորդից յետ առաջնորդս վերադարձաւ դատարկ, նախատելով թաթարներին, որ «բարաքեաթ» չ'ունեն։ Ես կարծելով որ ամեն բան փողով կարելի կ'լինի ճարել, ամեն մի ձուին քսան կոպէկ գին նշանակեցի, որ չ'լսված գին է այդ կողմերը, բայց զուր՝ մի ժամ առաջնորդս մի ռուբլի ձեռքումը ամբողջ գիւղը մանգալով հազիւ մի անպիտան հաւ էր գտել։ Ես տանուտէրին հարցնում էի. «բա ձեր հաւերը ձու չե՞ն ածում»։

—Ածում են պատասխանեց կիսամերկ տանուտէրը, բայց ոչ մեզ համար. այսօր գիւղի բոլոր ձուերը հաւաքեցին խանին տանելու։ Տանուտէրը ուզում էր ասել որ հաւերը իւրեանց ձուերը ազնուական արժանաւոր ճաշակների համար են ածում։

«Բայց դուք ի՞նչ էք ուտում»։ հարցրի ես։

—«Եթէ ցամաք հաց էլ ունենանք, այդ էս բախտաւորութիւն է», պատասխանեց տանուտէրը։

Գիւղերում առհասարակ կնամարդիք, մանաւանդ օտարականներից, չեն ծածկվում։ Մեզ ծառայող տան տիկնոջ, իմ կողքումս նստած